ուժերը և բազուկները։ Օգոստ. 5-ին Դիկտատուրայի կողմից ընդհանուր հրամանատար նշանակուեց զօր. Դոկուչայևը. զինուորական գործերի վարիչ՝ զօր. Բագրատունին։ Սակայն, անգլիացիների հետ կարելի չեղաւ ուժերի ներդաշնակութիւն և ընդհանուր ղեկավարութիւն առաջ բերել. նրանք, զօր. Դընստերվիլի հրամանատարութեան տակ, գործում էին բոլորովին անկախ։ Նրանք բռնեցին աջ ճակատի «Ցեխոտ հրաբուխ» մասը։ Զօր. Դընստերվիլը, առհասարակ, մռայլ աչքով էր նայում յաղթանակի հնարաւորութեան և հէնց սկզբից իրեն պահում էր այնպէս, որ ամենքը զգում էին, թէ առաջին իսկ լուրջ վտանգի դէպքում պիտի թողնի ու հեռանայ։

Օգնական ուժեր ստանալուց և վերակազմուելուց յետոյ, օգոստոս 29-ին, թիւրքերը անցան յարձակման, անգլիացիների գրաւած ճակատում։ Վերջիններս ուժգին դիմադրութիւնից յետոյ՝ թողին դիրքերի մի մասը։ Սեպտ. 1-ին թիւրքերի համար յաջող յարձակումներ սկսուեցին և աջ թեւում։ Զօր. Դընստերվիլը յայտնեց Դիկտատուրային, որ դրութիւնը անյոյս է և պէտք է թիւրքերի հետ բանակցութիւններ սկսել՝ պատերազմը վերջացնելու համար։ Դիկտատուրան միաձայնութեամբ մերժեց այդ առաջարկը և պահանջեց, որ անգլիացիք մեկնեն ճակատ՝ սպառնալով, հակառակ պարագային, թնդանօթի կրակի բռնել նրանց նաւերը։ Անգլիացիները համակերպուեցին։ Կռիւները չարունակուեցին անընդհատ. թշնամին դանդաղ, բայց հաստատուն քայլերով մօտենում էր քաղաքին։

Սեպտ. 13-ի առաւօտեան, մօտ 3000 թիւրքեր ու տեղացի մահմեդականներ՝ ձիաւոր ու հետևակ՝ գրոհ տուին Սուրուխանիի շրջանում և մինչեւ կէս գիշեր աշխատում էին ճեղքել բագուկների ճակատը։ Սեպտ. 13-14-ի գիշերը յարձակումները սկսուեցին ամբողջ ճակատի վրա, և լուսաբացին թիւրքերը գրաւեցին Գայլի Դրունքի դիրքերը։

Արիւնոտ վախճանը մօտենում էր։

Սեպտ. 14-ի առաւօտից անգլիացիք սկսեցին թողնել դիրքերը և նաւ նստել. պատրաստւում էին հետևելու բոլշևիկների օրինակին. իրենց կաշին աւելի թանգ էր, քան Բագուն ու Բագուի ժողովուրդը։ Ժամը 5-ին նրանք յայտնեցին Դիկտատուրային, որ հեռանում են և առաջարկեցին քաղաքը յանձնել թիւրքերին։ Հ. Ազգ. Խորհուրդը խնդրեց նրանց թախանձագին, որ դէթ 3 օր էլ մնան, մինչև որ կարելի լինի գաղթեցնել ժողովուրդը. զօր. Դընստերվիլը պատասխանեց. «2 ժամից յետոյ պիտի մեկնենք. սպիտակ դրօշակ բարձրացրէ՛ք»։ Եւ երեկոյեան ժամը 8-ին անգլիական նաւերը հեռացան Պարսկաստանի ուղղութեամբ։

Հայերը մնացին մենակ։ Դիկտատուրան սկսեց պատիրակութիւն պատրաստել հաշտութեան բանակցութիւնների համար։ Միւս կողմից, նաւերն էին թափւում ժողովուրդն ու զինուորները. զօրամասերը քայլ առ քայլ նահանջում ու հաւաքւում էին ծովափին։ Որոշ մասեր, սակայն, չկարողացան հեռանալ դիրքերից և մինչև վերջին փամփուշտը կրակելուց յետոյ՝ կոտորուեցին կամ գերի ընկան։